ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՕՖԵՐՏԱ
«III CONFERENCE CAPITAL MARKETS ARMENIA» ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք.Երևան 20 հունվարի 2026թ.

«ՍԻ ԲԻ ԷՆ ԴԵՅԹԱ ՍԸԼՈՒՇՆԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, (այսուհետ՝ նաև Կատարող)՝ ի դեմս տնօրեն՝ Դեղոյան Կարինեի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա և հանդես է գալիս որպես «ՍԲՈՆԴՍ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԻ»" ՍՊ ընկերության կողմից 2026թ. մարտի 13-ին ք. Երևանում անցկացվող «IV Conference Capital Markets Armenia» կոնֆերանսի համակազմակերպիչ, Կատարողի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու ցանկություն ունեցող ցանկացած անձի առաջարկում է սույն հրապարակային օֆերտայի ակցեպտավորմամբ (ընդունմամբ) կնքել «IV Conference Capital Markets Armenia» կոնֆերանսին մասնակցության կազմակերպման ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր)՝ ստորև նշված պայմաններով.

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Պայմանագրում, ինչպես նաև Կատարողի և Պատվիրատուի (այսուհետ միասին՝ Կողմեր) միջև կնքված առանձին համաձայնագրերում ներքոնշյալ բառերն ու արտահայտություններն ունեն ստորև նշված իմաստը, բացառությամբ այն դեպքերի, երբ Պայմանագրի բովանդակությունից բխում է այլ բան:

1.1 **Օֆերտա**՝ Կատարողի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 453-րդ հոդվածի պահանջներին համապատասխան կազմված և Կայքում հրապարակային ներկայացված սույն փաստաթուղթը, որը հասցեագրված է ցանկացած անձի և չի պահանջում գրավոր կարգով ստորագրում:

1.2 **Պայմանագիր**՝ Պատվիրատուի կողմից Օֆերտայի՝ ամբողջ ծավալով և անվերապահորեն ակցեպտավորման (ընդունման) միջոցով Կատարողի և Պատվիրատուի միջև կնքված սույն համաձայնությունը, դրա վերաբերյալ կնքված համաձայնագրերը, փոփոխությունները և լրացումները:

1.3 **Ակցեպտ**՝ Պատվիրատուի կողմից ամբողջ ծավալով և անվերապահորեն Օֆերտայի, այդ թվում՝ Կատարողի կողմից ներկայացված հաշիվների ընդունումը՝ Օֆերտայով նախատեսված համապատասխան գործողությունների իրականացման միջոցով:

1.4 **Կատարող**՝ «ՍԻ ԲԻ ԷՆ ԴԵՅԹԱ ՍԸԼՈՒՇՆԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

1.5 **Պատվիրատու**՝ իրավաբանական անձ կամ ֆիզիկական անձ, որը Կատարողի հետ Օֆերտայի պայմանների ակցեպտավորմամբ (ընդունմամբ) կնքում է Պայմանագիրը:

1.6 **Կոնֆերանս**՝ 2026թ. մարտի 13-ին ք.Երևանում անցկացվող «IV Conference Capital Markets Armenia»» կոնֆերանս:

1.7 **Ծառայություններ՝** Կատարողի կողմից Պայմանագրով նախատեսված պայմաններով 2026թ. մարտի 13-ին ք.Երևանում անցկացվող «IV Conference Capital Markets Armenia»» կոնֆերանսին Պատվիրատուի մասնակցության ապահովման հետ կապված ծառայությունները:

1.8 **Անձնական տվյալների մշակում՝** ավտոմատացված, տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է անձնական տվյալները հավաքելու կամ ամրագրելու կամ մուտքագրելու կամ համակարգելու կամ կազմակերպելու կամ պահպանելու կամ օգտագործելու կամ վերափոխելու կամ վերականգնելու կամ փոխանցելու կամ ուղղելու կամ ուղեփակելու կամ ոչնչացնելու կամ այլ գործողություններ կատարելու հետ:

Պայմանագրում կարող են կիրառվել արտահայտություններ, որոնց նշանակությունը սահմանված չէ Պայմանագրի 1-ին բաժնում: Այդ դեպքում նման արտահայտությունների մեկնաբանությունը իրականացվում է Պայմանագրի բովանդակությանը և էությանը համապատասխան:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

2.1. Սույն փաստաթուղթը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 453-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով հանդիսանում է «ՍԻ ԲԻ ԷՆ ԴԵՅԹԱ ՍԸԼՈՒՇՆԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ Պայմանագրի կնքման վերաբերյալ հրապարակային Օֆերտա: Օֆերտայի բովանդակությունը տեղադրված և հրապարակված է հետևյալ հասցեով ՝ https://cbonds-congress.ru/events/1365/conference/

2.2. Պայմանագրի կնքման պայմանների և կարգի նկատմամբ կիրառվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը, որոնք կարգավորում են հրապարակային պայմանագրի (ՀՀ ՔՕ 442-րդ հոդված), միանալու պայմանագրի (ՀՀ ՔՕ 444-րդ հոդված), օֆերտայի և դրա ակցեպտի (ՀՀ ՔՕ 451-459 հոդվածներ) ներկայացման կարգը և պայմանները:

2.3. Օֆերտայի ակցեպտ (ընդունում) և Պայմանագրի կնքման պահ է համարվում Պատվիրատուի կողմից https://cbonds-congress.ru/events/1365/registration/ էլեկտրոնային հղման, փոստային կամ ֆաքսիմիլային կապի միջոցով "ՍԲՈՆԴՍ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԻ" ՍՊ ընկերությանը հասցեագրված մասնակցության հայտի ուղարկումը, այսուհետ՝ «Հայտ»:

2.4. ՀՀ քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ Պատվիրատուի կողմից Օֆերտայի ակցեպտի (ընդունման) միջոցով կնքված Պայմանագիրը համարվում է Օֆերտայի պայմանների հիման վրա գրավոր ձևով կնքված պայմանագիր և հանդիսանում է պայմանագրի երկու կողմերի կողմից փաստաթղթային ձևով կնքված պայմանագրին համարժեք փաստաթուղթ:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳԻՆԸ

3.1. Կատարողը մատուցում է 2026թ. մարտի 13-ին ք.Երևանում անցկացվող «IV Conference Capital Markets Armenia»» կոնֆերանսին մասնակցության ապահովման ծառայությունները:

3.2. Պայմանագրով սահմանված Ծառայությունների արժեքը մեկ անձի համար կազմում է 80 000 (Ութանասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ կիրառելի հարկերը:

4. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Կատարողը, Պատվիրատուից ստացված Հայտի հիման վրա, էլեկտրոնային եղանակով ներկայացնում է հաշիվ-ապրանքագիր: Հաշիվ-ապրանքագրի սկանավորված պատճենը ուղարկվում է Հայտի մեջ նշված Պատվիրատուի էլ.փոստի հասցեով:

4.2. Պատվիրատուն Պայմանագրով նախատեսված վճարումն իրականացնում է Կատարողի կողմից հաշիվ-ապրանքագիր ներկայացնելուց հետո:

4.3. Պայմանագրով վճարումը իրականացվում է անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով: Ծառայությունը համարվում է մատուցված և ընդունված լրիվ ծավալով Ծառայության մատուցման ավարտին, որի վերաբերյալ հանձնման-ընդունման ակտ չի կնքվում:

5. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Կատարողը պարտավոր է՝

5.1.1. Ժամանակին տեղեկացնել Պատվիրատուին բոլոր այն իրավիճակների առաջացման մասին, որոնք պահանջում եմ լրացուցիչ համաձայնեցում,

5.1.2. Ժամանակին տրամադրել Պայմանագրի 4.1. կետում նշված փաստաթուղթը:

5.2. Կատարողն իրավունք ունի՝

5.2.1. Տեղափոխել Կոնֆերանսի անցկացման օրը,

5.2.2. Հրաժարվել Պատվիրատուին Ծառայություններ մատուցելուց՝ գրավոր ներկայացնելով մերժման պատճառաբանությունները և վերադարձնելով կանխավճարը,

5.2.3. Այն դեպքում, եթե Պատվիրատուն հայտնում է իր կամ իր ներկայացուցիչների՝ Կոնֆերանսին մասնակցելուց հրաժարվելու մասին, Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից գանձել տուգանք՝ որը հաշվանցվում է Ծառայության վճարից: Մասնակցությունից հրաժարվելու ծանուցումը պետք է լինի գրավոր և ներկայացվի Կատարողին փոստային կամ ֆաքսիմիլային կապով կամ Կատարողի էլեկտրոնային հասցեին մասնակցությունից հրաժարվելու մասին ծանուցման սկանավորված պատճենի ուղարկմամբ: Այն դեպքում, եթե մասնակցությունից հրաժարվելու ծանուցումը ներկայացվում է, ոչ ուշ քան կոնֆերանսի անցկացման ամսաթվից 4 (չորս) շաբաթ առաջ, ապա տուգանք չի գանձվում: Այն դեպքում, եթե մասնակցությունից հրաժարվելու ծանուցումը ներկայացվում է, ոչ ուշ քան կոնֆերանսի անցկացման ամսաթվից 2-ից (երկուսից) 4 (չորս) շաբաթ առաջ, ապա գանձվում է տուգանք՝ վճարված գումարի 50 % (հիսուն տոկոսի) չափով: Այն դեպքում, եթե մասնակցությունից հրաժարվելու ծանուցումը ներկայացվում է կոնֆերանսի անցկացման ամսաթվից 2 (երկու) շաբաթ առաջ, ապա գանձվում է տուգանք՝ վճարված գումարի 100 % չափով:

5.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

5.3.1. Պահանջել տրամադրելու Պայմանագրի 4.1. կետում նշված փաստաթուղթը:

6. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

6.1. Համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի պահանջների՝ Պատվիրատուն հաստատում է, որ

— տալիս է Կատարողին անձնական տվյալներ մշակելու համաձայնություն և ստացել է այդպիսի համաձայնություն իր կողմից ներկայացվող անձանց կողմից:

— Պատվիրատուն Կատարողին տալիս է իրավունք իրականացնելու ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է անձնական տվյալները հավաքելու կամ ամրագրելու կամ մուտքագրելու կամ համակարգելու կամ կազմակերպելու կամ պահպանելու կամ օգտագործելու կամ վերափոխելու կամ վերականգնելու կամ փոխանցելու կամ ուղղելու կամ ուղեփակելու կամ ոչնչացնելու կամ այլ գործողություններ կատարելու հետ և ստացել է այդպիսի իրավունք իր կողմից ներկայացվող անձանց կողմից:

— տալիս է Կատարողին համաձայնություն՝ լուսանկարահանել և տեսանկարահանել իրեն՝ նրա պատկերով լուսանկարներն ու տեսանյութերը պաշտոնական կայքերում, ստենդներում, գովազդային հոլովակներում, լուսանկարչական ցուցահանդեսներում և Կատարողի տպագիր արտադրանքներում օգտագործելու (հրապարակելու) և Միջոցառումները լուսաբանելու նպատակով, ինչպես նաև հավաստում է, որ ստացել է նման համաձայնություն իր կողմից ներկայացվող անձանց կողմից: Սույն համաձայնությունը տրվում է անձնական տվյալների սուբյեկտի լուսանկարահանման և տեսանկարահանման հետ կապված ցանկացած գործողությունների իրականացման համար, որոնք անհրաժեշտ կամ ցանկալի են Միջոցառման նպատակներին հասնելու համար, ներառյալ, բայց չսահմանափակվելով, լուսանկարների և տեսահոլովակների հավաքագրում, համակարգում, կուտակում, պահպանում, ճշգրտում (թարմացում, փոփոխություն), օգտագործում, ապանձնավորում, արգելափակում, ինչպես նաև ցանկացած այլ գործողությունների իրականացում: Կատարողը երաշխավորում է, որ անձնական տվյալների սուբյեկտի լուսանկարների և տեսանյութերի մշակումը կկատարվի ավտոմատացված կամ այլ կերպ:

6.2. Կոնֆերանսի ընթացքում Կատարողի կողմից պատրաստված ֆոտոռեպորտաժը և այլ նյութերը, որոնք կարող են պարունակել մասնակիցների լուսանկարներ, կտեղադրվեն Cbonds Congress - professional economic and financial conferences (cbonds-congress.com) կայքում:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Կատարողը ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում Պատվիրատուին կամ որևէ երրորդ անձի առջև ցանկացած անուղղակի վնասների, կորուստների, բաց թողնված օգուտի, պարտքերի և այլ ծախսերի համար, որը Պատվիրատուն կրել է սույն Օֆերտայի համաձայն Կատարողի կողմից մատուցվող ծառայությունից օգտվելիս:

7.2. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը ստորագրելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են

երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

7.3. Ցանկացած նամակագրություն, որն իրականացվում է Պայմանագրի կատարման նպատակով էլեկտրոնային հաղորդակցության ուղիներով (էլեկտրոնային փոստ), իրավաբանորեն նշանակալի է, և Կողմերը պարտավորվում են նման նամակագրության բովանդակությունը հայտնի չդարձնել այն անձանց, ովքեր չունեն համապատասխան լիազորություն:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի Հայտը ստանալու պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների ամբողջական կատարումը: Վերնագրերը սույն Պայմանագրում օգտագործված են միայն հարմարավետության համար, և չպետք է որևէ կերպով ազդեն սույն Պայմանագրի մեկնաբանության վրա:

8.2. Սույն Պայմանագրի պայմաններն ամբողջությամբ ընդունվում են Պատվիրատուի կողմից: Պատվիրատուն Պայմանագիրը կնքում է կամավոր, ընդ որում Պատվիրատուն (Պատվիրատուի ներկայացուցիչը)

- ամբողջությամբ ծանոթացել է Օֆերտայի պայմաններին,
- լիովին հասկանում է Օֆերտայի և Պայմանագրի առարկան,
- լիովին հասկանում է Պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իր գործողությունների նշանակությունն ու հետևանքները:

8.3. Պատվիրատուն (նրա ներկայացուցիչը) երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրել Պայմանագիրը և ունեն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

8.4. Կողմերի միջև Պայմանագրի կամ Օֆերտայի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով արտադատական կարգով: Կողմերի միջև Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերի արտադատական կարգով լուծման պահանջը համարվում է պահպանված, եթե այն իրականացվել է գրավոր ընթացակարգով: Ի հավաստում դրա Կողմերը կարող են ներկայացնել գրավոր ծանուցումներ, հարցումներ կամ այլ հաղորդակցություն: 30-օրյա ժամկետում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում ծագած վեճերը և (կամ) տարաձայնությունները լուծվում են ՀՀ դատական կարգով:

9. ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ

ԿԱՏԱՐՈՂ՝

«ՍԻ ԲԻ ԷՆ ԴԵՅԹԱ ՍԸԼՈՒՇՆԶ» ՍՊԸ

Իրավաբանական հասցե՝

0019, ՀՀ, ք. Երևան, Ազատության պող. 27, 6 հարկ, 605 սենյակ

Բանկ/Банк «Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Հ/հ /Счет 19300891294401
ՀՎՀՀ՝ 08214941

Տնօրեն՝ Կարինե Դեդոյան

ստորագրություն

«CBN DATA SOLUTIONS»
«ՍԻ ԲԻ ԷՆ ԴԵՅԹԱ ՍԸԼՈՒՇՆՍ»
08214941
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * 34 ԵՐԵՎԱՆ * REPUBLIC OF ARMENIA YEREVAN LIMITED LIABILITY COMPANY